ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 02/23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ, ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Բյուրեղավան 14 փետրվարի 2023թ.

2023 թվականի փետրվարի 14-ին, ժամը 13:00-ին, Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան բնակավայրում՝ Բյուրեղավանի համայնքապետարանի թիվ 1 վարչական շենքում, տեղի ունեցավ համայնքի ավագանու որոշումների նախագծերի և այլ առաջարկությունների նախնական քննարկման և դրանց վերաբերյալ եզրակացություններ տալու նպատակով ստեղծված ֆինանսական, բյուջետային և տնտեսական հարցերի մշտական գործող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստ՝ ***«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքում հանրային սննդի ծառայություն մատուցող անձանց՝ տվյալ օբյեկտին հարակից ընդհանուր օգտագործման տարածքներում ամառային (մայիսի 1-ից հոկտեմբերի 31-ը ներառյալ) և ձմեռային (նոյեմբերի 1-ից ապրիլի 30-ը ներառյալ) սեզոներին հանրային սննդի ծառայության կազմակերպման համար տարածքի օգտագործման կարգը, պայմաններն ու սահմանափակումները սահմանելու մասին», «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 19-ի N 77-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» և «Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության 2023 թվականի ֆինանսական գործունեության նախահաշիվը և դրա 2022 թվականի կատարողականը հաստատելու մասին»*** որոշմումների նախագծերի թեմաներով:

Նիստին մասնակցում էին Հանձնաժողովի նախագահ Էդիկ Պիճիկյանը, քարտուղար Արմեն Հայրապետյանը, անդամ Աշխեն Մարուքյանը, համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Լիլիթ Ավուշյանը, «Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» ՓԲԸ-ի տնօրեն Միքայել Միքայելյանը, հանձնաժողովի աշխատանքներին աջակցող, համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ Զարուհի Ապրեսյանը:

Հանձնաժողովի նախագահը ներկայացրեց նիստի օրակարգը՝

1. ***«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքում հանրային սննդի ծառայություն մատուցող անձանց՝ տվյալ օբյեկտին հարակից ընդհանուր օգտագործման տարածքներում ամառային (մայիսի 1-ից հոկտեմբերի 31-ը ներառյալ) և ձմեռային (նոյեմբերի 1-ից ապրիլի 30-ը ներառյալ) սեզոներին հանրային սննդի***

***ծառայության կազմակերպման համար տարածքի օգտագործման կարգը, պայմաններն ու սահմանափակումները սահմանելու մասին»,***

2. ***«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 19-ի N 77-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»,***
3. ***«Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության 2023 թվականի ֆինանսական գործունեության նախահաշիվը և դրա 2022 թվականի կատարողականը հաստատելու մասին»:***

Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Լիլիթ Ավուշյանը ներկայացրեց, որ օրակարգի առաջին հարցը՝ **«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքում հանրային սննդի ծառայություն մատուցող անձանց՝ տվյալ օբյեկտին հարակից ընդհանուր օգտագործման տարածքներում ամառային (մայիսի 1-ից հոկտեմբերի 31-ը ներառյալ) և ձմեռային (նոյեմբերի 1-ից ապրիլի 30-ը ներառյալ) սեզոներին հանրային սննդի ծառայության կազմակերպման համար տարածքի օգտագործման կարգը, պայմաններն ու սահմանափակումները սահմանելու մասին»** Բյուրեղավան համայնքի ավագանու որոշման նախագիծը մշակվել է «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 41.3-րդ կետի հիման վրա (*Համայնքի ավագանին սույն օրենքով սահմանված կարգով՝ 41.3) սահմանում է հանրային սննդի ծառայություն մատուցող անձանց՝ տվյալ օբյեկտին հարակից ընդհանուր օգտագործման տարածքներում ամառային (մայիսի 1-ից հոկտեմբերի 31-ը ներառյալ) և ձմեռային (նոյեմբերի 1-ից ապրիլի 30-ը ներառյալ) սեզոններին հանրային սննդի ծառայության կազմակերպման համար տարածքի օգտագործման կարգը, պայմաններն ու սահմանափակումները.*): Նախագծով նախատեսվում է հանրային սննդի ծառայություն մատուցող անձանց տվյալ հանրային սննդի օբյեկտին հարակից, Բյուրեղավան համայնքին պատկանող ընդհանուր օգտագործման տարածքներում ամառային (մայիսի 1-ից հոկտեմբերի 31-ը ներառյալ) և ձմեռային (նոյեմբերի 1-ից ապրիլի 30-ը ներառյալ) սեզոններին հանրային սննդի ծառայության կազմակերպման նպատակով կնքել համապատասխան քաղաքացիաիրավական պայմանագիր, որում պետք է նշվեն տարածքի օգտագործման կարգը, պայմանները և սահմանափակումները:

Նախագիծը կրում է նորմատիվ բնույթ, քանի որ պարունակում է վարքագծի պարտադիր կանոններ համայնքի վարչական տարածքում անորոշ թվով անձանց համար:

**Որոշվեց՝**

1. հավանություն տալ **«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքում հանրային սննդի ծառայություն մատուցող անձանց՝ տվյալ օբյեկտին հարակից ընդհանուր օգտագործման տարածքներում ամառային (մայիսի 1-ից հոկտեմբերի 31-ը ներառյալ) և ձմեռային (նոյեմբերի 1-ից ապրիլի 30-ը ներառյալ) սեզոներին հանրային սննդի ծառայության կազմակերպման համար տարածքի օգտագործման կարգը, պայմաններն ու սահմանափակումները սահմանելու մասին»** որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Ձեռնպահ – 0 Դեմ- 0

Էդիկ Պիճիկյան

Արմեն Հայրապետյան

Աշխեն Մարուքյան

Օրակարգի երկրորդ հարցը՝ ***«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 19-ի N 77-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»*** որոշման նախագիծը ներկայացրեց «Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» ՓԲԸ-ի տնօրեն Միքայել Միքայելյանը: Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի՝ *նորմատիվ իրավական ակտերում փոփոխություն կամ լրացում կատարում է միայն այդ նորմատիվ իրավական ակտն ընդունած մարմինը կամ նրա իրավահաջորդը*, և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ ավագանին որոշում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 19-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի համայնքային ենթակայության կազմակերպությունների 2023 թվականի աշխատողների քանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դյույքաչափերը հաստատելու մասին» N 77-Ա որոշման N5 հավելվածը՝ «Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» ՓԲԸ-ի 2023 թվականի աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը, շարադրել նոր խմբագրությամբ:

Միքայելյանը տեղեկացրեց, որ համայնքի ղեկավարի առաջարկությունը կատարվել է իր ի զեկուցագրի հիման վրա, ըստ որի անհրաժեշտություն է առաջացել կրճատել մեկ Ընտանեկան բժիշկ հաստիքային միավորը և Ընտանեկան բուժքույր 1 հաստիքային միավորը դարձնել 2 հաստիքային միավոր:

**Որոշվեց՝**

հավանություն տալ ***«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 19-ի N 77-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»*** որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Ձեռնպահ – 0 Դեմ- 0

Էդիկ Պիճիկյան

Արմեն Հայրապետյան

Աշխեն Մարուքյան

Միքայելյանը ներկայացրեց օրակարգի 3-րդ հարցը՝ ***«Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության 2023 թվականի ֆինանսական գործունեության նախահաշիվը և դրա 2022 թվականի կատարողականը հաստատելու մասին»*** որոշման նախագիծը:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և «Բաժնետիրական ընկերության մասին» օրենքի 83րդ հոդվածի 1-ին մասի (Խորհուրդն իրականացնում է Ընկերության գործունեության ընդհանուրր ղեկավարումը, բացառությամբ այն հարցերի, որոնք սույն օրենքով և կանոնադրությամբ վերապահված են ժողովի բացառիկ իրավասությանը:

Խորհուրդը պետք է ստեղծվի 50 և ավելի բաժնետեր ունեցող Ընկերությունում; Մինչև 50 բաժնետեր ունեցող Ընկերությունում խորհուրդ չստեղծվելու դեպքում նրա իրավասություններն իրականացնում է ժողովը: Այդ դեպքում կանոնադրությունը պետք է դրույթներ պարունակի այն անձի կամ Ընկերության այն մարմնի մասին, որն իրավունք ունի որոշումներ ընդունել սույն օրենքի 84-րդ հոդվածի 1-ին կետի «բ-դ» ենթակետերով սահմանված հարցերի վերաբերյալ: ), 84-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի (1. Խորհրդի իրավասություններն են՝ 24) ամենամյա ծախսերի նախահաշվի և դրա կատարողականի հաստատումը.) համայնքի ավագանին հաստատում է «Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» ՓԲԸ-ի 2023 թվականի ֆինանսական գործունեության նախահաշիվը և դրա 2022 թվականի կատարողականը:

**Որոշվեց՝**

հավանություն տալ ***«Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության 2023 թվականի ֆինանսական գործունեության նախահաշիվը և դրա 2022 թվականի կատարողականը հաստատելու մասին»*** որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Ձեռնպահ – 0 Դեմ- 0

Էդիկ Պիճիկյան

Արմեն Հայրապետյան

Աշխեն Մարուքյան

Նիստն ավարտվեց:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Էդիկ Պիճիկյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Արմեն Հայրապետյան